

1880—1890

Անգղիական յստակ միանգամայն ամուր և խորունկ այս ներգործութիւն՝ ունեցաւ մերոնց վրայ լաւագոյն արդիւնք մըն ալ։ Հեռուէն՝ Թուրքիայէն՝ նորասիրարար կրաւորաբար ու տգիտաբար Բողոքականութեան յարողք և անոր նորեւանդն բերումով իրենց եկեղեցիէն ու տեղական բարքէն ուծացողք՝ առած եղան գործնական լաւագոյն դաս մը, լսելով ու տեսնելով կէսէն աւելին բողոքական երկիրի մը մէջ (յԱնգղիա մանաւանդ ի Մանչէսթըր) Հայոց հին եկեղեցիին չինութիւնն և չէնութիւնն և անխոտոր անայլամէտ բարգաւաճումն՝ իր բովանդակ ծէսերովն ու արեւելեան հանդերձանքով ⁽¹⁾, որոց իբրեւ կռապաշտութեանց կը նայէին Թուրքահայ նախաբողոքականք. և այս կարծեաց առաջքը չէին կրցած առնել ո՛չ ժամանակին նախանձաւոր պատրիարքները, ո՛չ աստուածաբանները, ո՛չ ալ ընտանիքի հայրերը, որով ճարակներ մը աւելի պատրաստ գտաւ Հայոց մէջ՝ աւերող անղանաղանութիւնն (անտարբերութիւնն) և ստահակ լայնախոհութիւնը։

Անգղիական ազդեցութեան և գործունէութեան այս

(1) Միայն՝ աչքի զարնող կերպով զարմանալի է որ հայ վարդապետներն Անգղիայի փողոցներուն մէջ կերեւին անգղիական երէցի համակրօն տարազով, մինչ Յոյնք հոն ամենուրեք կը բարձրացունեն Արեւելքի հին և լոյս եկեղեցիին խնկաւէտ փառքն՝ իրենց եկեղեցական լայն սքեմովն և պղատոնիկ զլխանոցով։ Ինչո՞ւ այսպէս։